

## ՆՈՐ ՀՈՒՇԱԿՈԹ-ՈՎԻ ԲԱՑՈՒՄ

ճանաչված քանդակագործ, ԽՍԴԽ Գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, ԽՍԴԽ ժողովրդական նկարիչ և ԽԽՍԴ արվեստի փաստակավոր գործիչ Արա Սարգսյանի (1902-1969 թթ.) հեղինակած բազմաթիվ մոնումենտալ արձաններն ու փոքրածավալ կիսանդրիները զարդարում են ոչ միայն մեր գեղագիտի մայրաքաղաքի հրապարակներն ու պուրակները, փողոցներն ու շենքերը, այլև դրանք լայնորեն ներկայացված են հանրապետության մյուս բնակավայրերում, ինչպես նաև պատկերասրահներում ու թանգարաններում:


Սակայն միաժամանակ պեսք է նշել, որ մեծանուն արվեստագերի ոչ բոլոր գործերն են, որ բաց երկնքի փակ գրել են իրենց փեղը: Ա. Սարգսյանի շատ քանդակներ դեռևս սպասում են հովանավորների, որպեսզի ծովան ու վեղադրվեն իրենց արժանի վայրերում: Դրանցից մեկն է նրա «Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց» քանդակն է, որը հայ ժամանակակից արձանագործության փայլուն նվաճումներից է:

Եվ ահա, Երևանի պետքան համալսարանի կենդրունական մասնաշնքի հրապարակում, սեպտեմբերի 3-ին, մեծ հանդիսավորությամբ փեղի ունեցավ Ա. Սարգսյանի հեղինակած հիշյալ հուշակոթողի բացումը:

«Նորի սուրբությունը Վերածվեց մեծ դրույթության, որին մասնակցում էին հարյուրավոր ուսանողներ, պյուֆեսուրադասահոսական կազմի և մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ և հյուրեր: Ներկա էին նաև Երևանի քաղաքապետ Ռ. Նազարյանը, մայրաքաղաքի գլխավոր ճարդարապետ Ն. Սարգսյանը, այլ պաշտոնագործ անձինք և քանդակագործի հարազարդներն ու բարեկամները:»

Երևանի քաղաքապետը հավաքված լրագրողներին ասաց, որ բացվող հուշարձանախումբը մայրաքաղաքին նոր շուրջ կիաղորդի և համահունչ կլինի համալսարանի հրապարակում տեղադրված մեր մյուս մեծերի հուշարձաններին:

ԵՊԴ ռեկտոր, ակադեմիկոս Ռ. Սարգիրոսյանն իր բացման խոսքում նշեց, որ գաղանդակագործ քանդակագործ Ա. Սարգսյանի հանրահայր «Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոց» հուշարձանի բացումը մեր մայր կրթօջախի առջև պատմական կարևոր նշա-



Հուշակոթողի բացման մասնակիցները

նակություն ունի ոչ միայն ուսանողության ու պրոֆեսորադասախոսական կազմի համար, այլև այն արժանի նվեր է մեր ողջ կրթական համակարգին: Արա Սարգսյանի այս մրգահղացման մարմնավորությունը, շարունակեց ռեկտորը, ունի ավելի քան կեսդարյա պատմություն: Տարիներ շարունակ փարբեր պատճառներով ծգձգվել է այս գեղեցիկ քանդակի փեղադրությունը: Այդ մասին ժամանակին ակնարկել է նաև հեղինակը և խնդրել, որ այն դրվի մայրաքաղաքի արժանավայել փեղերից մեկում: Եվ այսօր, կես



Հուշակոթողի օրինության ժամանակ

դար անց, կարարվում է նրա իղձը, նրա սփեղծագործությունների գլուխգործոցը դրվում է մեր նայր բուի հրապարակում, իրեն արժանավայել վայրում: Թվում է, թե մեր առաջին մեծ ուսուցչակենարի այս հուշարձանը սփեղծված է հենց այսպես կանգնեցվելու համար: Այն մարմնավորում է հայոց Ոսկեդարի և մեր օրերի միջև եղած կապը:

Համալսարանի ռեկտորը նշեց, որ այս քանդակը փեղադրվեց շնորհիվ քանդակագործի որդու՝ Արմեն Սարգսյանի: Նա իր միջոցներով ծովել է դպրությունը և հետամուս եղել, որ այն փեղադրվի իրոք արժանավայել փեղում: Քանդակի վրա մեծ աշխատանք է կարարել նաև Ա. Սարգսյանի աշակերդ, քանդակագործ Վշոր Անդրիասյանը: Հուշարձանը նախագծել է ճարպարապետ Ռոմեն Զովհակյանը, իսկ պարվանդանի հետ կապված աշխարհանքները իրականացրել է վարպետ Վարդան Ամրոյանը՝ իր որդիների հետ:

Այնուհետև հուշարձանի վրայից դամդաղորեն ցած սահեց ճերմակ պասպառը, և հավաքվածների հայացքի առաջ 3,5 մ բարձրություն ունեցող գեղեցիկ պարվանդանից վեր հասնեց շուրջ 2,5 մետրանոց բրոնզաձույլ վեհաշուր կոթողը՝ Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի լուսավոր կերպարներով: Գիրքը, որ նրանց ձեռքին է, քանդակագործի մրգահղացմամբ խորհրդանշում է գրականության ու մշակույթի ունեցած դերը մեր ժողովությի կյանքում: Գիրքը, որ իր բացված էջերին կրում է հայոց Այրուենը, փասորնեն կապակցում է քանդակի երկու կերպարներին:

Այնուհետև շարականների հոգեզմայլ հնչյունների ուղեկցությամբ Սուրբ Մյուստոնով օծվեց հուշարձանը: Օծումը կարարեց Աստվածարանական Փակովստի դեկան, պրոֆ. Շահեն արքեպիսկոպոս Աճեմյանը: Սրբազն Նայոն իր խոսքում ասաց. «Այսօր մենք հուշարձանի բացումը կարարեցինք Սրբալույս Մյուտոնի օծմամբ: Նայ ժողովուրդը և Նայաստիանյաց Եկեղեցին ունեցած են երեք մեծ Սուրբեր: Առաջինն է Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, որ քրիստոնեացուց հայությունը, երկրորդ և երրորդն են Սուրբ Սա-

հակ և Սուրբ Մեսրոպ, որոնք քրիստոնեությունը հայացուցին, լրիվն զայն մեզ և մեր հոգին մեջ բացին գեղեցիկ այն լեզուն, որ կոչվի Հայկացյան լեզու»:

Երևանի Գեղարվեստի ակադեմիայի ռեկտոր, պրոֆ. Ա. Խարեկելյանն իր ելույթում նշեց, որ Արա Սարգսյանը մեր ժողովրդի հիմնալի քանդակագրոծներից և Գեղարվեստի ակադեմիայի հիմնադիրներից մեկն էր, ում աշակերտած սաները դարձել են հայքին արվեստագետներ ու նաև մանկավարժներ: Այս փարի մենք նշելու ենք անվանի քանդակագրոծի ծննդյան 100-ամյակը, և այսօրվա հանդիսությունը ևս մի փուրք է նրա վառ հիշարքակին:

Պատմության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Բ. Դարությունյանը նույնպես նշեց, որ դի ունեցող իրադարձությունը կարևոր նշանակություն ունի Հայաստանի մշակույթային կյանքում և թե ընալ է պատրահական չէ, որ այս հուշարձանը կանգնեցվել է մեր համալսարանի գլխավոր մասնաշենքի առջև, որովհետև թե՛ մեր մեծերը և թե՛ 1919-ին հիմնադրված համալսարանը լույս են բերում:

Քանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող, անվանական Կրթաթոշակառու Գևորգ Էմին-Տերյանն իր ելույթում նշեց, որ ուսանողների համար չափազանց պարտավորեցնող է մեր երկու մեծերի ոգեծեն ներկայությունը համալսարանի մոտ: Դա մեզ միշտ կհուշի, թե ով ենք մենք, որպեսից ենք զայիս և ուր ենք գնում:

Քանդակագործ Աշով Անդրիասյանն իր ելույթում ասաց. «Այսօր մեզ համար հուզիք օր է, քանի որ իրականացավ մեր մեծ ուսուցիչ երազանքը, ուսուցիչ, որի սաներն են եղել արվեստագետներ Սարգսի Մուրադյանը, Դուկաս Չուբարյանը, Արա Շիրազը, Սարգս Բաղրամյանը, Խաչատրյանը, Խոկանդարյանը, Արշամ Շահինյանը, Յուրի Պեփրոսյանը և շաբաթ ուրիշներ, որոնցից շաբերն այսօր ներկա են այսպեսու՞մ»:

Երախփագիտության խոսք ասաց քանդակագործի ծոռնուի Ասպրիկ Ալթունյանը (Երևանի պետքական բժշկական համալսարանի դեկագիտության ֆակուլտետի 5-րդ կուրսի ուսանողութիւն): Այս հանդիսությունը մեծ խորհուրդ ունի, ասաց նա, քանի որ այն դեռի է ունենում իմ ականավոր պապի ծննդյան 100-ամյակի փարում և այսպես՝ Երևանի պետքական համալսարանում: Ես իմ երախփագիտությունն եմ հայքնում հուշարձանի դեղադրման բոլոր կազմակերպիչներին, ճարդարապետ Ռոմեն Զովհակյանին, վարպետ Վարդան Ամրոյանին, բոլոր շինարարներին և մասնակիցներին:

Վերջում, որպես երախփիքի փուրք, համալսարանի ռեկտորը ծաղկեասակ դրեց նորարաց հուշարձանի պարվանդանին: Ծաղկեասակներ դրվեցին նաև Երևանի քաղաքապետարանի և ուսանողության կողմից, և մինչ ուշ երեկո մարդկանց նորանոր խմբեր էին զայիս բացված հուշակոթողը փեսնելու:

**ՎԱՐԱՆ ՄԱՂԱԼՅԱՆ**